ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Թիւ 1181
Նոյեմբեր 6, 1956

Պատուարժան
Ծխական Խորհուրդ
Գլենդէյլի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին
Գլենդէյլ.

Ազնիւ սիրելիք մեր.

Այսու կը տեղեկացնենք թէ ձեր ծուխին Թեմական Պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը աւարտած է, եւ կը հրահանգենք որպէսզի յառաջիկայ 1957ի սկիզբը գումարելիք Տարեկան Ծխական Ժողովին մէջ նոր պատգամաւորներու ընտրութիւնը կատարէք։

Նկատի ունեցէք Թեմական Կանոնադրութեան տրամադրութիւնները ընտրութեանց համար։ Անհրաժեշտ է որ եկեղեցւոյդ ծխական անդամատուրքը վճարած իրաւասու անդամներու թիւին հիման վրայ որոշէք Ձեր ընտրելիք պատգամաւորներու թիւը։ Եթէ ծուխիդ տրատու անդամներու թիւը աւելցած է, կարող էք Ձեր այժմու պատգամաւորներու թիւէն աւելին ընտրել, պայմանաւ որ Առաջնորդարանիս հաւանութիւնը ապահովէք նախապէս։

Արդ՝ Ձեր Նախապատրաստական Ժողովին մէջ ընտրուած Ընտրողական Յանձնախումբը, ինչպէս Ծխական Խորհուրդի անդամներու, նոյնպէս եւ պատգամաւորներու ընտրելեաց զատ ցանկեր պէտք է պատրաստած ըլլայ որպէսզի Յունուարի Տարեկան Ժողովին մէջ այդ ցանկերուն վրայէն կատարէք ընտրութիւնները։

Հովիւի եւ Ծխական Խորհուրդի պարտականութիւնն է հսկել որ ժողովները եւ ընտրութիւնները կատարուին Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն։ Իսկ Թեմական Պատգամաւորներու ընտրութեան արդիւնքը պէտք է առանձին նամակաւ հաղորդուի Առաջնորդարան եւ ընտրուած պատգամաւորներուն։

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ ի գործադրութիւն.

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3053
Դեկտեմբեր 12, 1957

Պատուարժան
Ծխական Խորհուրդ
Գլիվլէնտի Հայաստանեայց Եկեղեցւոյ
Գլիվլէնտ.

Ազնիւ սիրելիք մեր,

Հաճոյքով ստացանք ամսոյս 7 թուակիր Ձեր նամակը, որով Ձեր գնահատութիւնն ու շնորհակալութիւնը կը յայտնէիք որ Ձեզ տրամադրած էինք Արժանաշնորհ Տ. Հայկ Քհնյ. Տօնիկեանը, եւ փափաք կը յայտնէիք որ պէտքի Յունուար 19ին կրկին Տէր Հայկը Ձեր մէջ ըլլայ ու Ս. Պատարագի մատուցմամբ մխիթարէր մեր բարեպաշտ ժողովուրդը։

Ինչպէս գիտէք Տէր Հայկ օգնական հովիւն է Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցւոյ, որուն Ծխական Խորհուրդը շատ համաձայն չէ որ իրենց մէկ պաշտօնեան յաճախ բացակայի եկեղեցիէն. Հետեւաբար պատշաճ կը լինի եթէ Ձեր խնդրանքը ներկայացնէք Ս. Խաչ եկեղեցւոյ Ծխական Խորհուրդին։

Տէր Հայկէն ուրախութեամբ իմացանք որ վերջնականապէս կարգադրութիւն ըրած էք եւ կանխավճար ալ ըրած այն կալուածի գնման համար զոր ժամանակին կը ծրագրէիք գնել։ Այս լուրը մեզ շատ հաճոյք պատճառեց։ Վերջապէս մօտ ատենին պիտի ունենաք Ձեր սեփական աղօթատեղին։ Այս առթիւ շնորհաւորելով Ձեզ կուզենք նաեւ յիշեցնել թէ այդ կալուածի թուղթերը անպայման պէտք է Առաջնորդարանի անունին եղած ըլլայ, ապագայի դժուարութիւնները կանխելու համար։

Օրհնելով պատուարժան Ծխական Խորհուրդի բոլոր անդամները եւ մաղթելով եկեղեցաշէն Ձեր գործոց յաջողութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Թիւ 1887
Յունիս 7, 1957

Պատուարժան
Ծխական Խորհուրդ
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին
Գլիվլէնտ.

Ազնիւ սիրելիք մեր,

Նկատի ունենալով Թեմիս մէջ այցելու հովիւի մը կատարելիք դերին անհրաժեշտութիւնը, Ծխական Խորհուրդի գիտութեամբ այդ կարեւոր պաշտօնին կոչած ենք մեր հոգեւոր դասու արժանաւոր եկեղեցականներէն Արժանաշնորհ Տ. Վրթանէս Աւագ Քհնյ. Փափազեանը։

Այս պատեհութենէն օգտուելով՝ վիճակիս անհովիւ եկեղեցիներու այցելութեանց համար պատրաստած ենք ժամանակացոյց մը, ըստ որում Տէր Վրթանէս Ձեր համայնքին մէջ պիտի ըլլայ Օգոստոս 11ին եւ Հոկտեմբեր 27ին, թէ Ս. Պատարագի մատուցմամբ մխիթարելու մեր ժողովուրդը եւ թէ ծուխին մէջ կատարելու հովուական աշխատանքներ։

Այսու կը հրահանգենք պատուարժան Ծխական Խորհուրդին կարեւորութեամբ նկատի ունենալ յիշեալ թուականները եւ ամէն կերպով օգնել Տէր Վրթանէսին՝ դիւրացնելու համար անոր առաքելութեան գործը յօգուտ Թեմիս հոգեւոր կեանքին եւ Առաջնորդարանիս։

Հաղորդելով զայս առ ի գիտութիւն եւ յուսալով որ սիրով պիտի գործակցիք Առաջնորդարանիս, կօրհնենք զՁեզ եւ կը մաղթենք եկեղեցաշէն Ձեր գործոց յաջողութիւն։

Մնամք հայրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Ամերիկայի Հայոց

Թիւ 3223
Փետրուար 24, 1958

Մեծայարգ
Տիար Արմէն Տ. Գասպարեան
ատենադպիր Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Պրն. Գասպարեան,

Ստացած ենք 1958 Փետրուար 21 թուակիր Ձեր ծխական տեղեկագիրը, որով կը տեղեկացնէիք թէ գումարուած Ծխական ժողովին մէջ ընտրուած էք Ծխական Խորհուրդի անդամները, եւ ներկայացնելով ընտրուածներուն անունները, կը խնդրէիք անոնց պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ ներքոյիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ եկեղեցւոյ պարտաճանաչ անդամներ, կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, ուստի կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ հետեւեալին.—

Պրնք. Յակոբ Խաչատուրեան
Տիգրան Տէմիրճեան
Սարգիս Պետրոսեան

Կը մաղթենք Ձեզ համախոհ եւ բեղմնաւոր գործունէութիւն եւ կաղօթենք պատուարժան Ծխական Խորհուրդի բոլոր անդամներուն առողջութիւն եւ յաջողութիւն։

Մնամ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 491
Յուլիս 1, 1959

Մեծայարգ
Տիար Արմէն Գասպաշեան
Ատենադպիր Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Պրն. Գասպաշեան,

Ինչպէս Ձեզի ուղղուած շրջաբերականէն տեղեակ եղած էք, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Աթոռոյ նուիրակ Հոգեշնորհ Տ. Հմայեակ Ծ. Վրդ. Ինգոյեան մեր թեմին մէջ ի նպաստ Ս. Աթոռին նուիրահաւաքու Հաւաքութեան գործին սկսած է։

Առաջնորդ Սրբազան Հօր կարգադրութեամբ, Հայր Սուրբը Օգոստոս 9ին պիտի այցելէ Համայնքիդ, թէ Ս. Պատարագ մատուցանելու եւ թէ շրջանիդ մէջ Հայ Երուսաղէմի համար նուիրահաւաքում կատարելու մեր ազգայիններէն։

Հաճեցէք ամէն աջակցութիւն ընծայել Հայր Սուրբին, իբրեւ օժանդակութիւն Երուսաղէմի մեր դարաւոր հաստատութեան։

Զայս հաղորդելով Ձեր սիրելիութեան առ ի գիտութիւն.

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԻՒՌՈՆ Ծ.ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 1267
Յունիս 8, 1960

Մեծայարգ
Տիար Արմէն Գասապաշեան
Ատենադպիր Թեմական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Պրն. Գասապաշեան,

Առաջնորդ Սրբազան Հօր բացակայութեան եւ իր հրահանգով՝ այսու կը յայտնենք թէ Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր շքախումբով Տիթրոյթէն Գլիվլէնտ պիտի ժամանէ Երեքշաբթի, Յունիս 21ին ժամը 12,57 կէսօրէ ետք, Նորթ Ուեսդ Էյր Լայնով՝ Թռիչքի թիւն է 304։

Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ պիտի ընկերանայ Վեհափառին, որով յանձնարարուած ենք Ձեզի հաղորդելու որ պանդոկին մէջ երկու սենեակով յարկաբաժինի կարգադրութիւն ընէք, պայմանաւ որ սենեակներէն մին ըլլայ մէկ անկողինով, իսկ միւսը երկու։ Մէկ անկողինոց սենեակը պիտի գործածուի Առաջնորդ Հօր կողմէ, իսկ երկու անկողինովը՝ Տ. Կոմիտաս Եպս. Տէր Ստեփանեանի եւ Էջմիածնի դիւանապետ Պրն. Հայկ Առաքելեանի կողմէ։

Եղած կարգադրութեան համաձայն, Վեհափառ Հայրապետը եւ գաւազանակիր Տ. Եղիշէ Վրդ. Սարգիսեան իբրեւ հիւր պիտի մնան ձեր ծուխին անդամ եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն. Երուանդ Աղաճանեանի բնակարանը։

Առաջնորդ Սրբազանի փափաքն է որ ճաշկերոյթ մը կազմակերպէք ծուխիդ կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին։ Իսկ եթէ կարելիութիւն ունիք՝ ձեր արարողութեանց համար գործածած յունաց եկեղեցւոյ մէջ "Հրաշափառ"ի կարգադրութիւն ընէք Յունիս 21ի երեկոյեան համար։

Կ'ուզենք ձեր ուշադրութեան յանձնել թէ Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ գումարուած իր նիստին մէջ Թեմական Խորհուրդը որոշած է որ Հայրապետական ճաշկերոյթի զուտ շահը եւ Հայրապետական պատարագներուն առթիւ եկեղեցիներուն մէջ շրջագայուած պնակներուն ամբողջական եկամուտը պէտք է ղրկուի Առաջնորդարան առանց յապաղումի, որպէս զի կարելի ըլլայ հոգալ Վեհափառի թեմիս այցելութեան առթիւ եղած ծախքերը։

Զայս հաղորդելով ձեր սիրելիութեան առ ի գիտութիւն.

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթարար

ՄԻՌՈՆ Ծ.ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 1267
Յունիս 8, 1960

Մեծայարգ
Տիար Արմէն Գասպաշեան
Ատենադպիր Մխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Պրն. Գասպաշեան,

Առաջնորդ Սրբազան Հօր բացակայութեան եւ իր հրահանգով՝ այսու կը յայտնենք թէ Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Վազգէն Առաջին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր շքախումբով Տիթրոյթէն Գլիվլէնտ պիտի ժամանէ Երեքշաբթի, Յունիս 21ին ժամը 12,57 կէսօրէ ետք, Նորթհ Ուեսդ էյր Լայնով՝ թռիչքի թիւն է 304։

Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ պիտի ընկերանայ Վեհափառին, որով յանձնարարուած ենք Ձեզի հաղորդելու որ պանդոկին մէջ երկու սենեակով յարկաբաժինի կարգադրութիւն ընէք, պայմանաւ որ սենեակներէն մին ըլլայ մէկ անկողինով, իսկ միւսը երկու։ Մէկ անկողինոց սենեակը պիտի գործածուի Առաջնորդ Հօր կողմէ, իսկ երկու անկողինովը՝ Տ. Կոմիտաս Եպս. Տէր Ստեփանեանի եւ էջմիածնի դիւանապետ Պրն. Հայկ Առաքելեանի կողմէ։

Եղած կարգադրութեան համաձայն, Վեհափառ Հայրապետը եւ գաւազանակիր Տ. Եղիշէ Վրդ. Սարգիսեան իբրեւ հիւր պիտի մնան ձեր ծուխին անդամ եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Պրն. Օրուանդ Աղաճանեանի բնակարանը։

Առաջնորդ Սրբազանի փափաքն է որ ճաշկերոյթ մը կազմակերպէք ծուխիդ կողմէ ի պատիւ Վեհափառ Հայրապետին։ Իսկ եթէ կարելիութիւն ունիք՝ ձեր արարողութեանց համար գործածած յունաց եկեղեցւոյ մէջ "Հրաշափառ"ի կարգադրութիւն ընէք Յունիս 21ի երեկոյեան համար։

Կ'ուզենք ձեր ուշադրութեան յանձնել թէ Առաջնորդ Սրբազանի նախագահութեամբ գումարուած իր նիստին մէջ Թեմական Խորհուրդը որոշած է որ Հայրապետական ճաշկերոյթի զուտ շահը եւ Հայրապետական պատարագներուն առթիւ եկեղեցիներուն մէջ շրջագայուած պնակներուն ամբողջական եկամուտը պէտք է ղրկուի Առաջնորդարան առանց յապաղումի, որպէս զի կարելի ըլլայ հոգալ Վեհափառի թեմիս այցելութեան առթիւ եղած ծախքերը։

Զայս հաղորդելով ձեր սիրելիութեան առ ի գիտութիւն.

Մնամք ողջունիւ սիրոյ
Աղօթարար

ՄԻՌՈՆ Ծ.ՎՐԴ. ԿՐՃԻԿԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 1948

Մարտ 3, 1961

Արժանապատիւ
Տ. Անանիա Քհնյ. Գասպարեան
Այցելու Հովիւ եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Սիրելի Տէր Անանիա,

Ստացանք 1961, Փետրուար 22 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Փետրուար 19ին գումարուած Գլիվլէնտի համայնքին Ծխական ժողովը կատարած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ եկեղեցւոյ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.-

Տիարք՝ Տոքթ. Գեղամ Կէօզեան
Գէորգ Արսլանեան
Նուպար Ապալեան
Արմէն Գասպարեան
Ալեքս Գալուստարեան /մէկ տարուան համար/
Օր. Թագ Ազարեան /մէկ տարուան համար/

Օրհնելով նորընտիր անդամները՝ կը մաղթենք Ձեզի եւ պատուարժան Ծխական Խորհուրդին յաջող եւ արդիւնաւոր գործունէութիւն, ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ ու ի շինութիւն համայնքիդ մեր սիրելի ժողովուրդին:

Մնամ Տիրական սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 2291
Օգոստոս 9, 1961

Բարեշնորհ
Ներսէս Սրկ. Ճէպէճեան
Քէմպրիճ.

Սիրելի Տիրացու Ներսէս,

Ինչպէս բերանացի ըսած էի Ձեզի, այսու, պաշտօնապէս Ձեզ կը նշանակեմ Հոգեւոր Մատակարար Գլիվլէնտի մեր Համայնքին։

Ձեր պաշտօնն ու պարտականութիւնը պիտի ըլլայ.-

Ա. Ամէն կիրակի առաւօտեան ժամերգութիւն կատարել Գլիվլէնտի Հովուատան մէջ.

Բ. Հոգ տանիլ Համայնքի Կիրակօրեայ Վարժարանին.

Գ. Ուսուցանել ծխական դպրացի աշակերտներուն եւ հսկել անոնց ազգային դաստիարակութեան.

Դ. Զօրացնել տեղւոյն Հայց. Եկեղեց. Երիտ. Կազմակերպութեան մասնաճիւղը.

Ե. Հսկել եկեղեցւոյ շինութեան գործին, որպէս զի անիկա կառուցուի ըստ օրինաց եւ կանոնաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ։

Մենք պաշտօնապէս հաղորդած ենք Գլիվլէնտի Ծխական Խորհուրդին այս կարգադրութիւնը, թէ Սեպտեմբերէն սկսեալ դուք պիտի սկսիք Ձեր պաշտօնը, եւ վստահ ենք թէ անոնք սիրով կը հոգան Ձեր նիւթական պէտքերը եւ բնակարանի հարցը։

Ձեզի կը թելադրենք որ ըլլաք աշխոյժ եւ գիտակից Ձեր պատասխանատու պաշտօնին ու մեզ տեղեակ պահէք Ձեր գործունէութեան մասին։

Մաղթելով Ձեզի Աստուծոյ առաջնորդութիւնը եւ յաջողութիւն.

Մնամ Հայրական սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 2200
Յունիս 22, 1961

Մեծայարգ
Տօքթ. Գէղամ Կէօքճեան
Ատենապետ Միական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին

Յարգելի Տքթ. Կէօքճեան,

Մօտ երկու տարի առաջ Թեմական Պատգամաւորական Ժողովը որոշեց 50.000 տոլարի հանգանակութեան արշաւ մը ընել Առաջնորդարանի պարտուց բարձման եւ բացառիկ ծախքերուն համար, եւ ձեր համայնքը տակաւին չէ կատարած իր պարտականութիւնը, հակառակ քանիցս Առաջնորդարանէն եղած յիշեցումներուն եւ յորդորներուն։

Թեմական Խորհուրդը, իր վերջին նիստին մէջ, անդրադառնալով այս հարցին, որոշեց մասնաւոր հրահանգ տալ մեր այն ծուխերուն, որոնք տակաւին չեն վճարած իրենց սահմանուած գումարը, եւ պարտք դնել անոնց վրայ որ մինչեւ տարւոյս վախճանը անպատճառ վճարեն իրենց պարտքը՝ հաւասարակշռելու համար Առաջնորդարանի պիւտճէն։

Վստահ ենք թէ նկատի կ՚առնէք այս յոյժ կարեւոր հարցը եւ ձեզի բաժին հանուած գումարը ամբողջութեամբ գոյացնելով՝ առաջին առիթով կը փոխանցէք Առաջնորդարան։

Կը մաղթենք այս ուղղութեամբ ձեր կատարած աշխատանքներուն կատարեալ յաջողութիւն։

Մնամ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 2292
Օգոստոս 9, 1961

Մեծայարգ
Տոքթ. Գեղամ Կէօրճեան
Ատենապետ Միացեալ Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ

Սիրելի Տոքթ. Կէօրճեան,

Ինչպէս տեղեակ էք, Առաջնորդարանիս ուսանողներէն Ներսէս Ճէպէճեան անցեալ Յունիսին աւարտեց իր աստուածաբանական ուսումը Թէոլոժիքըլ Սեմինարիին մէջ, եւ անցեալ կիրակի Ուաթըրթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ Սարկաւագ ձեռնադրուեցաւ մեր ձեռքով։

Ըստ մեր խոստումին, այսու Արժանապատիւ Ներսէս Սարկաւագը պաշտօնապէս Հոգեւոր մատակարար կը նշանակենք Գլիվլէնտի մեր համայնքին։

Իր պարտականութիւնները պիտի ըլլան Սեպտեմբերէն սկսեալ ամէն կիրակի պատարագեան ժամերգութիւն կատարել Ձեր շրջանին մէջ, հոգ տանիլ Կիրակնօրեայ Վարժարանին եւ Հայ Դպրոցին եւ զբաղիլ Հայց. Եկեղ. Երիտ. Կազմակերպութեամբ, նոյնպէս հսկել եկեղեցւոյ շինութեան գործին, ըստ օրինաց Հայաստանեայց Ս.Եկեղեցւոյ։

Վստահ ենք թէ Միացեալ Խորհուրդը սիրով կը հոգայ անոր նիւթական պէտքերը եւ կը գտնէ յարմար բնակարան իրեն համար։

Մաղթելով Ձեզի յաջողութիւն Ձեր եկեղեցաշինական աստուածահաճոյ գործին մէջ.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

**SHAKER HEIGHTS VETERINARY HOSPITAL**

[illegible] ROAD SHAKER HEIGHTS, OHIO

DR. K. K. [illegible]

Veterinarian

Թիւ 4056
Փետրուար 28, 1962

Բարեշնորհ
Ներսէս Սրկ. Ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար Գլիվլէնտի Հայոց

Սիրելի Ներսէս Սարկաւագ,

Առաջնորդ Սրբազանի հրամանով այսու ներփակ Ձեզի կը ղրկենք 25 տոլարի փոխգիր մը՝ Ձեր առօրեայ գործածութեան համար։

Այս առթիւ կ՚ուզենք Ձեզի տեղեկացնել թէ Ձեր յարգելի բարերարը՝ Տոքթ. Գեղամ Կէօզճեան, ընթացիկ տարւոյ Ձեր կրթաթոշակին համար Առաջնորդարանիս տրամադրած է 347.90 տոլար, եւ նոյն գումարը այս թուականաւ պիտի ղրկենք պատուարժան Միական Խորհուրդին, որպէսզի յանձնէ Ձեր դպրոցին։

Առաջնորդ Սրբազանի եւ Տոքթ. Գեղամ Կէօզճեանի փափաքն է որ յառաջիկայ գարնան եկեղեցական ձեռնադրուիք ու Գլիվլէնտի Համայնքին Հոգեւորականի պակասը լրացնէք։

Մաղթելով Ձեզի կարողութիւն եւ յաջողութիւն։

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Թիւ 4150
Մարտ 29, 1962

Բարեշնորհ
Ներսէս Սրկ. Ճէպէճեան
Հոգեւոր Սպասաւոր եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ Համայնքի

Սիրելի Ներսէս Սարկաւագ,

Ստացած ենք ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Արժ. Տ. Առնակ Քհնյ. Գալստեանի նախագահութեամբ՝ 1962, Յունուար 14ին գումարուած Համայնքիդ Ծխական ժողովը կատարած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ ձեր Ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ եկեղեցւոյդ պարտաճանաչ ու նուիրեալ անդամներ, կը վայելեն ձեր համայնքի ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալի.

Տիկ. Ռօզ Աղաբեան
Տիարք՝ Վահան Կարապետեան
Ալէքս Պողոսարեան

Կը յանձնարարենք որ առաջին առիթով Առաջնորդարան ղրկէք ձեր Ծխական Խորհուրդի նոր դիւանի կազմի անուն-հասցէները։

Օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունէութիւն, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի շինութիւն Համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամք Տիրական սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՌՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի

Թիւ 3473
Փետրուար 1, 1962

Մեծայարգ
Տօքթ. Գեղամ Կէօքճեան
Գլիվլէնտ.

Յարգելի Տօքթ. Կէօքճեան,

Ինչպէս գիտէք, Ձեր սանը Բարեշնորհ Ներսէս Սրկ. Ճէպէճեան, Առաջնորդ Սրբազանի հաւանութեամբ կը հետեւի յաւելեալ ուսման քաղաքիդ դպրոցի մը մէջ։

Նորին Սրբազնութիւնը կը փափաքի տեղեկանալ թէ դուք, ինչպէս անկէ առաջ ազնուաբար ստանձնած էիք Ներսէս Սարկաւագի կրթաթոշակը, պիտի բարեհաճէի՞ք հոգալ անոր ընթացիկ տարւոյ ուսման ծախքը եւս։

Առաջնորդ Սրբազանը կը խորհի թէ Ներսէս Սարկաւագ խելացի, ուսումնատենչ ու նուիրեալ երիտասարդ մըն է, հետեւաբար արժանի է թէ Ձեր եւ թէ Առաջնորդարանի հոգածութեան։

Մաղթելով Ձեզի քաջառողջ կեանք, երջանկութիւն ու բարօրութիւն.

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Յունուար .., 1962

Բարեշնորհ
Ներսէս Սարկ. Ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար Քլիվլընտի.

Սիրելի Տիրացու,

Վիրաբուժական գործողութեան մը պատճառաւ վերջերս բաւական բացակայեցայ գրասենեակէն։ Այժմ աւելի լաւ եմ եւ ուրախութեամբ տեղեկացայ որ, համաձայն խոստումիդ, պէտք եմ աւելցնել նաեւ, մղուած մեր նոր սերունդին Հայ լեզուն սորվեցնելու փափաքէն, Քլիվլընտի մէջ եւս բացած ես Հայ դպրոց մը, որուն համար մեզմէ առած ես 15 Այբբենարան Ա. եւ 15 Բ. Գիրք

Վստահ եմ որ արդէն իսկ սկսած ես դպրոցը եւ շուտով մեզի կը ղրկես պէտք եղած տեղեկութիւնները, աշակերտներու թիւի, տարիքի եւ դասարաններու մասին։

Յուսամ ձեռնարկած ես նաեւ Խնամակալութեան մը կազմութեան, որպէս անհրաժեշտ պայման, տանելու դպրոցի վարչական գործերը, ինչպէս աշակերտները շատցնելու համար աշխատանք, ձեռնարկներ կազմակերպելու գործ, երիտասարդ ծնողներու հետ կապ, եւայլն, այս կերպով դիւրացնելու համար նաեւ Ձեր գործը։

Շատ ուրախ պիտի ըլլայի եթէ պարբերաբար գրէիք Ձեր տարած աշխատանքներուն եւ ձեռք բերուած արդիւնքներու մասին։

Ներփակ կը ղրկեմ Ձեզի մեր Կազմական Կանոնագրէն երկու օրինակ, Հայերէն եւ Անգլերէն, ինչպէս նաեւ ստանաւորներու եւ երգի տետրակներ, Ձեր կողմէ ստացուած գիրքերու պարտացուցակին հետ միասին։

Ի սրտէ գնահատելով Ձեր նուիրումի ոգին՝ Հայ լեզուի յաւեր-ժացման համար, Ամերիկայի մեր գաղութին մէջ, եւ մաղթելով Ձեզի՝ լաւագոյն յաջողութիւններ,

Ձերդ՝ ջերմ բարեւներով

ԱՐՏԱՇԷՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ
Կրթ. Տեսուչ

Թիւ 9043
Սեպտեմբեր 18, 1963

Բարեշնորհ
Ներսէս Սարկաւագ Ճէպէճեան
Հոգեւոր Մատակարար Գլիվլէնտի Համայնքի

Սիրելի Տիրացու Ներսէս,

Այսօր հեռաձայնի վրայ յայտնած Ձեր փափաքին համաձայն, իր ժամանակին Ձեզի եւ Պատուարժան Ծխական Խորհուրդին պիտի հաղորդենք Հոգ.Տ. Վազգէն Վրդ. Գպրսեանի Ամերիկա ժամանման թուականը--եթէ առաջուց մեզի հաղորդէ--որպէս զի զինք դիմաւորելու առիթը ունենաք։

Առաջնորդ Սրբազանի կարգադրութեամբ, Հոգ.Տ.Իսահակ Ծ.Վրդ. Ղազարեան Սեպտ. 29ին պիտի պատարագէ տեղւոյդ վրայ, փոխարինելով Արժ. Տ. Վրթանէս Աւագ Քհնյ. Փափազեանին, որուն համար նախապէս կարգադրութիւն եղած էր։

Առանձին ծրարով այս թուականաւ Ձեզի կը ղրկենք Էջմիածնի գրապանի օրացոյցէն օրինակ մը, որ ապսպրած էիք քարտուղարին միջոցաւ։

Մաղթելով Ձեզի յաջողութիւն.

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

# Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 10161
Դեկտեմբեր 27, 1963

Մեծայարգ
Տոքթ. Գեղամ Կէօքճեան
Ատենապետ Պատուարժան Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայաստանեայց Եկեղեցւոյ

Յարգելի Տոքթ. Կէօքճեան,

Հաճոյքն ունինք հաղորդելու Ձեր սիրելութեան թէ Ձեր համայնքին իբրեւ հոգեւոր հովիւ նշանակուած Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբղ. Գպրսլեան, ամսոյս 18 թուակիր նամակով կը տեղեկացնէ թէ Յունուար 2ին պիտի ներկայանայ Լոնտոնի Ամերիկեան Հիւպատոսարանը՝ վիզա ստանալու համար, եւ Հիւպատոսարանէն իրեն եղած թելադրութեան վրայ՝ կը խնդրէ որ Ամերիկա գալու իր տոմսակին համար կարգադրութիւն ըլլայ այժմէն։

Առաջնորդ Սրբազան Հօր յանձնարարութիւնն է որ Պատուարժան Ծխական Խորհուրդը փութով Առաջնորդարան հասցնէ 350 տոլար, որպէսզի կարենանք հեռագրով Հայր Սուրբին ղրկել օդանաւի տոմսակն ու առօրեայ ծախսին համար 50 տոլար։

Հայր Վազգէնի տոմսակը պիտի կտրուի Լոնտոնէն-Նիւ Եորք-Գլիվլէնտ։ Բայց Նորին Սրբազնութեան փափաքն է որ Հայր Սուրբը գոնէ մէկ երկու օր մնայ Առաջնորդարան, իր նոր պաշտօնին վերաբերեալ անհրաժեշտ յանձնարարութիւններ ստանալու համար։

Հայր Վազգէնի Նիւ Եորք ժամանման եւ դէպի Գլիվլէնտ մեկնումին մասին տեղ տեղեակ պիտի պահենք իր ժամանակին։

Ձեր Պատուարժան Ծխական Խորհուրդին հաղորդելով այս ուրախ լուրը եւ մաղթելով ամենուդ եկեղեցանուէր գործերուն կատարեալ յաջողութիւն.

Մնամ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԿԻԶԻՐԵԱՆ
Առաջնորդական Փոխանորդ

Թիւ 10030
Հոկտեմբեր 11, 1963

Մեծայարգ
Տոքթ. Գեղամ Կէօքճեան
Ատենապետ Պատուարժան Մխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայց. Եկեղեցւոյ

Յարգելի Տոքթ. Կէօքճեան,

Առաջնորդական Փոխանորդ Հայր Սուրբը երէկ մեզի տեղեկացուց թէ Հայր Վազգէն գանգատ է յայտներ Ձեզի որպէս թէ Առաջնորդարանը բոլորովին անտարբեր է գտնուեր իրեն հանդէպ եւայլն։

Հաճեցէք գրոյս կցուած գտնել մեր կողմէ իրեն ուղղուած Սեպտ. 3 թուակիր նամակի պատճենը։ Այդ նամակը, ինչպէս պիտի տեսնէք, ըստ Հայր Սուրբի ցուցմունքին, իրեն ղրկուած էր Լիբանանի հասցէով։

Մեր այդ գրութեամբ Հայր Սուրբէն խնդրած ենք որ վիզա ստանալէն յետոյ տեղեկացնէ Առաջնորդ Սրբազանին, իսկ եթէ իր ճամբորդութեան ծախքը հոգալու ի վիճակի չէ մենք կրնանք իր օդանաւի տոմսակը հոսկէ ղրկել։

Իրմէն չենք ստացած մեր այդ նամակին պատասխանը եւ այլապէս ալ չենք լսած իրմէ Օգոստոս 26 թուականէն ի վեր։

Այս թուականաւ Հայր Սուրբին գրուած մեր նամակին պատճենը նաեւ ներփակ պիտի գտնէք։

Մնամ սիրով եւ յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

Թիւ 6076
Ապրիլ 16, 1963

Մեծայարգ
Տիար Արմէն Գասապաշեան
Ատենադպիր Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտի Հայոց Համայնքի

Յարգելի Պրն. Գասապաշեան,

Առաջնորդ Սրբազան Հայրը ստացած է Ապրիլ 7 թուակիր Ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ Համայնքիդ Հոգեւոր մատակարար Ներսէս Սրկ. Ճէպէճեան հրաժարական ներկայացուցած է Ծխական Խորհուրդին եւ կը խնդրէք որպէս զի Նորին Սրբազնութիւնը եկեղեցական մը նշանակէ Ձեր ծուխին համար։

Հրահանգուած եմ հաղորդելու պատուարժան Ծխական Խորհուրդիդ, թէ Բարեշնորհ Ներսէս Սրկ. Ճէպէճեան պէտք չէ իր հրաժարականը Ձեզի ներկայացնէր, վասնզի Առաջնորդ Սրբազանը զինք նշանակած է Հոգեւոր մատակար մինչեւ նոր տնօրինութիւն։

Նորին Սրբազնութիւնը կը մերժէ Սարկաւագին հրաժարականը եւ իրեն գրած է այդ մասին։

Առաջնորդ Հայրը կը խորհի թէ մինչեւ որ Ձեր եկեղեցւոյ շինութիւնը չաւարտի՝ կարելի չէ Ձեզի մնայուն հովիւ մը նշանակել։ Եթէ որեւէ թելադրութիւն ունիք առ այդ, կարող էք ներկայացնել Նորին Սրբազնութեան։

Մնամ խորին յարգանօք

Սուրէն Մանուէլեան
Դիւանապետ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

**Diocese of the Armenian Church of America**

TELEPHONE:
LExington 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.


Թիւ 11130
Մարտ 17, 1964

Նորին Ս. Օծութիւն
Տ. Տ. Վազգէն Առաջին
Սրբազնագոյն Կաթողիկոս Ամենայն Հայոց
Մայր Աթոռ Ս. Էջմիածին.

Վեհափառ Տէր,

Ուրախ եմ Ձեր Ս. Օծութեան հաղորդելու թէ Գլիվլէնտի մեր փոքրիկ համայնքը շինեց իր եկեղեցին, որչափ կարելի է հայկական ճարտարապետութեան նկարագիրով, որուն օծումը պիտի կատարենք Ապրիլ 12ի կիրակին։

Այս առթիւ, պիտի խնդրէինք Ձեր Սրբութենէն որ բարեհաճէիք Ձեր Հայրապետական Գիրով օրհնել Գլիվլէնտի մեր բարեպաշտ ու եկեղեցաշէն ժողովուրդը։

Մատչելով Հայրապետական Ս. Աջոյն.

Մնամք խոնարհ որդի

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

# Armenian Church of Cleveland

666 Richmond Road ★ Cleveland, Ohio 44124 ★ 381-6590


23 Նոյեմբեր, 1963

Գերաշնորհ
Տ. Սիոն Արք. Մանուկեան, Առաջնորդ
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Ն. Ե.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ձեր հետ եղած հեռաձայնային հաղորդակցութեան վրայ յենլով, եկեղեցւոյս Շինութեան Յանձնախումբը եւ Ծխական Խորհուրդը կարգադրութիւններ ընելու վրայ են այժմ, նորաշէն եկեղեցւոյն օծումը ~~ունենալու 12 Ապրիլ, 1964~~-ի կիրակին: Հաճեցէք հաստատել սոյն թուականը նամակով մը:

Թուականի փոփոխութիւնը ստիպողական եղաւ երկու պատճառներով. Նախ որովհետեւ անկարելի եղաւ ճաշկերոյթի սրահ եւ գիշերելու սենեակներ գտնել տարբեր թուականներուն եւ երկրորդ, որովհետեւ մայր խորանի պատրաստութիւնը, շինութիւնը եւ տեղաւորումը պիտի ուշանայ: Այն պարագային որ անկարելի ըլլայ Ձերդ Սրբազնութեան վերեւի թուականին ներկայ ըլլալ, միակ երկրորդ թուականը որ կրնանք սրահ ապահովել, 26 Ապրիլի կիրակին է:

Մաղթելով Ձեր գործոց յաջողութիւն, մատչելով ի համբոյր Ձեր Ս. աջոյն,

Որդիական յարգանօք,

Ներսէս Սրկ. Ճէպէճեան,
Նախագահ Ծխ. Խորհուրդի

Armenian Church of Cleveland

666 Richmond Road ★ Cleveland, Ohio 44124 ★ 381-6590

Մարտ 19 1964

Գերաշնորհ
Տ.Սիոն Ս.Արքեպս.Մանուկեան
Բարեջան Առաջնորդ Հայոց Ամերիկայի եւ Գանատայի,
Նիւ-Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Մարտ 17 թուակիր ձեր գրած նամակը այսօր ստացայ ուր նշած էիք թէ Հայրապետէն օրհնութեան գիր մը կարգադրուած է որուն համար ուրախութիւն կը յայտնեմ։Բայց ինծի համար անհասկնալի կը թուի երբ կը գրէք որ մեր ծուխէն պէտք չէր գրուէր Ս.Էջմիածին։Ես տակաւին հոս չեկած քանիցս Վեհափառին նամակ գրած եմ եւ չեմ դադրիր գրելէ եւ եթէ մերթ ընդ մերթ Առաջնորդարանին հետ կապուած հարցեր կան ետ չեմ կենար նշելէ։Երբ Վեհին գրեցի նշեցի որ օրհնութեան գիրի մը կը սպասուի որու մասին անշուշտ մեր առաջնորդարանը գրած պէտք է ըլլայ։Ես այն համոզումը ունէի որ այս ուղղութեամբ արդէն գրուած է եւ շուտով գրութիւնը պիտի հասնի որպէսզի օծման գրքին մէջ դնենք,բայց մեր ակնկալած գրութիւնը չեկաւ...։Բոլորս յուսախաբ եղանք լսելով որ նմանօրինակ գրութիւն մը չէ խնդրուած Վեհափառէն եւ եթէ Սրբազան Առաջնորդէն խնդրուի պիտի ղրկուի։Ես օրհնութեան գիր խնդրելու համար չգրեցի Հայրապետին այլ ի միջի այլոց այդ ալ նշեցի։

Այս առթիւ ուրախ եմ նշելու նաեւ որ Ծխական Խորհրդոյ եւ Տիկնութեան յանձնախումբի միացեալ ժողովը եկեղեցւոյ կնքահօր հարցը կրկին նկատի առաւ եւ նկատելով որ հարցը շատ քաշքշուեցաւ եւ նկատելով որ Տէմիրճեաններ չեն վշտանար,ինչպէս իրենք նշեր էիր իրենց նամակին մէջ,ժողովս որոշեց կնքահայր նշանակել Տօքթ. Գ. Կէօքճեանը որը կը խնդրէ որ Եկղեցւոյ անունը ըլլայ Ս.Գրիգոր Նարեկացի։

Ջայսուսիկ հաղորդելով ձերդ Սրբազնութեան մնամ որդիական սիրով եւ ակնածանօք,

[signature]

Վազգէն Ծ.Վրդ.Գըպըըսլեան
Հոգեւոր Հովիւ Գլիվլէնտի Հայոց

Սիոն Սրբազ. Մանուկեան
Առաջնորդարան Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք.

Սուրբ Էջմիածինէն կ'ողջունենք Քլիվլէնտի Նորակառոյց Հայոց Եկեղեցին, եւ Սուրբ Օծման առթիւ կը շնորհաւորենք Ձեր Սրբազնութիւնը, Հոգեւոր Հովիւը, Վարչութիւնը եւ Համայն Հաւատացեալ Ժողովուրդը։

Թող Աստուած յաւէտ անսասան եւ չէն պահէ Քլիվլէնտի Հայոց Եկեղեցին, եւ Համայնքը, եւ խաղաղութեան ու բարօրութեան մէջ՝ Ամերիկեան Տիրախնամ մեծ երկիրը։

Օրհնութեամբ

ՎԱԶԳԷՆ Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ապրիլ 1, 1964
Մայր Աթոռ Ս. Էջմիածին

*Armenian Church of Cleveland*

**666 Richmond Road ★ Cleveland, Ohio 44124 ★ 381-6590**

28 Յունուար 1964

Գերաշնորհ
Տ.Սիոն Ս.Արքեպս.Մանուկեան,
Բարեխնամ Առաջնորդ Հիւս.Ամերիկայի եւ Գանատայի.
Նիւ-Եորք,

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Շնորհակալութեամբ ստացած ենք Ձեր թիւ
11036,22 Յունուար թուակիր նամակը որով կը վաւերացնէիք Նորընտիր ծխական խոր-
հըրդի անդամները: Նորընտիր ծխական խորհուրդը իր ուխտը պիտի կատարէ Փետր. 9-ին:
Ամսոյս 15-ին ձեզմէ բաժնուելէս վերջ հանգիստ կերպով հասայ Գլիվլէնտ ուր
ստացայ պէտք եղած դիմաւորութիւնը ծխական խորհուրդի եւ ժողովուրդի կողմէ որուն
մասին արդէն Հայր Եղիշէն ձեզի տեղեկութիւն տուաւ: Համայնքիս գործերը իրենց
բարւոք ընթացքին մէջ են: Ամսոյս 24-ին գումարուած այս տարուայ Ա.ժողովին ծխա-
կան խորհուրդը որոշեց ինծի տալ շաբթական 60 տոլար եւ ապագային աւելցնել երբ
գործերը աւելի կանոնաւորուին: Որոշեցին նաեւ որ ամիսը երկուանգամ ժողով գու-
մարեն համայնքիս պէտքերը նկատի առնելու համար:
Այս առթիւ Ձերդ սրբազնութեան նկատառման կը յանձնենք հետեւեալ կէտերը:
1.-Երէկ գիշեր ծխական խորհուրդը ունեցաւ իր երկրորդ նիստը եւ միաձայնութեամբ
որոշեց որ Բարշ.Ներսէս Սրկ.Ճէպէճեանը հոս մնայ մինչեւ եկեղեցւոյ օծումը
ապրիլ 12, գործերուս եւ Եկեղեցւոյ շինութեան օգնելու համար:
2.-Նորէն երէկ գիշեր Եկեղեցւոյ շինութեան յանձնախումբը եւ ծխական խորհուրդ ը
միասին ժողովին մէջ որոշեցին խնդրել Ձերդ Սրբազնութենէն որ շուտով Վեհափառ
Հայրապետին գրէք եւ բերել տաք եկեղեցւոյ շինութեան եւ օծման առթիւ ղրկուելիք
օրհնութեան գիրը որպէսզի տպուի եկեղեցւոյ օծման առթիւ հրատարակուելէք գրքոյկին
մէջ: Կը խորհինք թէ մինչեւ Փետր.15.-ը պէտք է որ այդ գիրը եկած ըլլայ:
3.-Շուտով ղրկուի Մամբրէ Ս.Արք.Գալֆաեանի նկարը որուն մասին խօսուած էր Եղիշէ
Վարդապետին:
4.-Կը խնդրենք իմանալ նաեւ թէ եկեղեցւոյ օծման առթիւ ղրկուելիք հրաւիրագրին
մէջ որ ժամը պէտք է դնել որպէս սկիզբ օծման արարողութեան:
5.-Կուզէինք նշել նաեւ որ իմ ճամբու ծախքս լօնտոնէն Գլիվլէնտ աժան նստած է,
ինչպէս որ ես գրած էի Պր.Ս.Մանուէլեանին, եւ Օդանաւի ընկերութիւնը պարտէր
տարբերութիւնը ետ վճարել: Կուզէինք իմանալ թէ այս ուղղութեամբ քայլ առնուած
է թէ ոչ:
Ներփակ կը ղրկենք նորընտիր ծխական խորհուրդի անդամոց անունները ու հասցէները:
Զայսոսիկ տեղեկացնելով ի նկատառումն եւ ի վաւերացումն մատչիմ ի համբոյր
Ձեր Սրբազնութեան Ս.Աջոյն:

Որդիական Սիրով,

Վազգէն Ծ.Վրդ.Գըպըրըլեան

Թիւ 11272
[illegible] 1964

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ.Վրդ. Գըպըրըսլեան
Հոգեւոր Հովիւ Ս. Նարեկ Եկեղեցւոյ
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Վազգէն,

Մայիս 15 թուակիր նամակէդ ուրախութեամբ իմացայ որ հիւանդանոցէն ելած ես ու Գլիվլէնտ վերադարձած։ Կը յուսամ թէ շուտով ուժերդ վերագտած՝ կը սկսիս հովուական գործիդ։ Կատարեալ առողջութիւն կը մաղթեմ քեզի։

* * *

Ստացած եմ Ապրիլ 22 թուակիր նամակդ՝ ի մասին Յակոբ Խաչերեանի ընդ Տիկին Այլին Պոկեշեւճեցիի վերամուսնութեան, որ ամուսնալուծեալ է եւ կաթոլիկ։

Արդ նկատի ունենալով որ դատարանը զինքը ազատ արձակած է եւ արգելք չէ դրած վերամուսնութեան, այսու կ՚արտօնենք անոնց ամուսնութիւնը Հայ Եկեղեցւոյ մէջ, պայմանաւոր Տիկինը ընդունի Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը եւ ըստ օրինաց Բ.պսակի արարողութիւնը կատարուի եկեղեցւոյ մէջ։

Վստահ ենք թէ հոգ պիտի տանիք որ ըստ կանոնի կատարուի Բ. պսակի արարողութիւնը։

Մաղթելով կատարեալ առողջութիւն եւ Աստուծոյ օգնականութիւնը.

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ**
**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ**
**Գլիվլէնտ, Օհայօ**

Հովիւ—Վազգէն Ծ. Վրդ. Գէպրէսլեան



Area Code 216—Tel. 381-6590

**ST. GREGORY OF NAREK**
**ARMENIAN APOST. CHURCH**
666 Richmond Road
Cleveland, Ohio 44124, U.S.A.

Pastor—Very Rev. Vasken Kebreslian

Յունուար 13, 1965

Գերաշնորհ
Տ. Սիոն Ս. Արքեպս. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ-Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Նոյեմբեր 26, 1964 թուակիր նամակով մը տեղեկացուցած էի Ծխական Խորհուրդիս որոշումը Եկեղեցւոյս Օծման Ա. տարեդարձը կատարելու մասին: Եղիշէ Հայր Սուրբը գրած էր այդ մասին պիտի գրէք: Բայց ապահով ըլլալու համար ինծմէ խնդրուեցաւ որ նորէն գրեմ ձեզ եւ ըսեմ թէ Եկեղեցւոյս օծման Ա. տարեդարձը տարւոյս Մայիս 9ին պիտի կատարենք եւ կը խնդրենք որ ձեր ներկայութեամբ մեր ժողովուրդը ուրախացնէք եւ քաջալերէք: Նոյն գիշեր ճաշկերոյթ պիտի սարքենք եւ նորէն ժողովուրդէն դրամ ուզենք Եկեղեցւոյս պարտքը վճարելու համար: Այդ օրուայ համար տեղն ալ արդէն ապահոված ենք:

Մայիս 9ը Մայրերու օր ըլլալուն կը փափաքինք քանի մը կիներ որ երկար ատեն տիկնանց Միութեան անդամ եղած են, վարձատրել զանոնք փոքր խաչերու պարգեւատրութեամբ եւ այս ուղղութեամբ ձեր թելադրութեանց պէտք ունինք: Չենք գիտեր թէ ինչ է լաւագոյն ձեւը: Խաչերը Առաջնորդարանը կը հայթայթէ թէ Ծխական Խորհուրդը եւայլն:

Անշուշտ Մայիս 9էն առաջ կարելի չէ այդ հանդէսը ընել Զատկական տօնակատարութեանց պատճառաւ իսկ վերջն ալ ուշ կը մնայ: Հետեւաբար ծուխիս համար լաւագոյն օրն է Մայիս 9ը: Եթէ դուք պիտի չկրնաք գալ պիտի խնդրէի որ Տիրան Սրբազանը ձեզի ներկայացնէր:

Զայսոսիկ հաղորդելով Ձերդ Սրբազնութեան մնամ որդիական ակնածանօք,

Ձեր Սուրբ Աջը համբուրող

Վազգէն Ծ. Վրդ. Գէպրէսլեան, Հովիւ

Թիւ 1178
Փետրուար 17, 1965

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ս. Վրդ. Գըպրըօլեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Եւ Նախագահ Պատուարժան Ծխական Խորհուրդի
Քլիվլընտ.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք Ձեր 1965 Փետրուար 6 թուակիր տեղեկագիրը, որով կը տեղեկացնէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 6ին գումարուած Ձեր Տարեկան Ծխական ժողովին մէջ կատարուած է Ծխական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի առնելով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալներուն՝ իբրեւ անդամ Ծխական Խորհուրդի.

Տիարք՝ Նուպար Ալպալեան
Տոքթ. Գեղամ Կէօքճեան
Գէորգ Արսլանեան
Սուրէն Միրզաեան

Ձեր Թեմական Պատգամաւորներուն կը ղրկուի Թեմական Պատգամաւորական ժողովի հրաւէրը յառաջիկային։

Կը յանձնարարենք որ առաջին առթիւ Առաջնորդարան ղրկէք Ծխական Խորհուրդի նոր դիւանի անուն-հասցէները։

Այսու, օրհնելով Ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Մնամ Յիսուսեան սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի

Թիւ 16028
Յունուար 30, 1967

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Եւ Նախագահ Միացեալ Խորհուրդի
Կլիվլէնտ, Օհայօ.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացանք ենք 1967 Յունուար 24 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Հոգեշնորհ Տ. Վազգէն Մ. Վրդ. Գէորգեանի նախագահութեամբ՝ Յունուար 22ին գումարուած Ձեր Միացեալ Ժողովին մէջ կատարուած է Միացեալ Խորհուրդին անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով գործակցութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը։

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմակալ Առաջնորդութեան արտօնութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միացեալ Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին։

Այս առթիւ կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ տակաւին չեն հետեւած Թեմական Առաջնորդութեան յորդորներուն, եւ պաշտօնական տեղեկութիւններ ղրկած են Առաջնորդարանս Դիւան, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնեն կարգապահութիւնը Առաջնորդութեան արտօնութեանց։

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէն եւ հեռաձայնի թիւը։

Օրհնելով Միացեալ Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյս եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին։

Սիրոյ ողջունիւ,

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ Յովհաննէս Դաւթեան
Նուպար Սարգսեան
Սուրէն Միքայէլեան
Յովհաննէս Միհրան Պէտնէեան

Թիւ 21787
Մայիս 28, 1969

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Ստացած ենք Ծխական Խորհուրդի Թղթակցող Քարտուղար Տիար Տիրան Գրիգորեանի ստորագրութեամբ Մայիս 16, 1969 թուակիր Ձեր նամակը, ինչպէս նաեւ ներփակեալ արձանագրութիւնը Ձեր Ծխական Մասնաւոր ժողովի, 1969 Փետրուար 16ին գումարուած եւ երկու թերթ գծագրութիւնները կառուցանելի սրահին:

Թեմական Խորհուրդի Մայիս 22ի նիստին մէջ նկատի առինք զանոնք եւ վաւերացնելէ առաջ անհրաժեշտ նկատեցինք որ Ծխական Ժողովի որոշումը հաղորդող պաշտօնագիրը ստորագրուած ըլլայ Հովիւին եւ Ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենադպիրին կողմէ: Հետեւաբար հաճեցէք սոյն պաշտօնագիրը մեզի ղրկել առաջին առիթով:

Ճարտարապետներու Յանձնախումբ մը կազմած ենք, որոնք նկատի պիտի առնեն գծագրութիւնները եւ իրենց թելադրութիւնները մեզի ներկայացնեն: Այդ թելադրութիւնները Ձեզի կը հաղորդենք իր ատենին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 21924
Յուլիս 18, 1969

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլենտէյլ.

Սիրելի Հայր Արշակ,

Տեղեկացանք որ Ֆլարէնս Գարակէօզեան, որ Էվընսթընի Միլըրի Ուեսթըրն Սէմինէրիի մէջ մեր ուսանողներէն մէկն էր, իր ամուսնութենէն յետոյ Արամ Ճանճիկեանի հետ, Գլենտէյլի կողմերը փոխադրուած են

Կը յանձնարարենք որ զիրենք արձանագրէք մեր եկեղեցւոյ ցանկին մէջ, եւ մասնաւորաբար քրիստոնէական դաստիարակութեան եւ կիրակնօրեայ վարժարանի մէջ պատասխանատուութիւն յանձնէք իրենց, մանաւանդ Տիկին Ճանճիկեանին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 21974
Օգոստոս 28, 1969

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Գլիվլէնտի մեր այցելութեան ժամանակացոյցը հետեւեալը պիտի ըլլայ.-

1. Գլիվլէնտ պիտի ժամանենք Սեպտեմբեր 12, 1969, Ուրբաթ յետ միջօրէի ժամը 5.31ին, Թի Տըբլեու Էյ Թիւ 344 Թռիչքով, Ինտիանապոլիսէն, ուր Նաշընըլ Գաունսըլ օվ Չըրչըզի ժողովին պիտի մասնակցինք:

Նոյն Ուրբաթ իրիկուն կարգադրեցէք որ ժողով ունենանք Ծխական Խորհուրդին հետ ժամը 7.30-8.30, եւ ժամը 9ին բոլոր կազմակերպութեանց վարչութեանց հետ: Ոչ վարչական անդամներ ազատ են ներկայ գտնուելու:

2. Սեպտեմբեր 13, 1969, Շաբաթ կէսօրէ յետոյ պարտաւոր ենք Պոսթոն մեկնիլ ժամը 2.15ին, եւ նոյն գիշերը ժամը 12.35ին ետ Գլիվլէնտ հասնիլ:

3. Կիրակի օր Ս. Պատարագի մատուցումը եւ ճաշկերոյթը կը կատարենք համաձայն Ձեր կարգադրութեանց:

4. Սեպտեմբեր 15, Երկուշաբթի պարտինք վերադառնալ Նիւ Եորք:

Սիրով ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 28581
Յունիս 22, 1972

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Նկատի առնելով որ անհրաժեշտ է փոփոխութիւն մը կատարել Դպրաց Դասերու Ընկերակցութեան Տարեկան Համագումարի թուականի կապակցութեամբ, կը հաղորդենք Ձեզի որ Համագումարը փոխանակ Հոկտեմբեր 22 շաբաթավերջին, տեղի պիտի ունենայ Հոկտեմբեր 13-14ին, Ուրբաթ եւ Շաբաթ օրեր:

Հաճեցէք ուրեմն, անհրաժեշտ կարգադրութիւնները կատարել ըստ այնմ: Կեդրոնական Խորհուրդը դպրաց դասերուն պիտի հաղորդէ Համագումարի թուականի փոփոխութեան մասին:

Սիրով ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 28582
Յունիս 22, 1972

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Ներկայիս կարգ մը հովուական կարգադրութիւններ պարտաւոր ենք կատարել մեր Թեմին մէջ: Թեմական Խորհուրդի նիստին մէջ որոշած ենք հովուական այս նշանակումները կատարել յառաջիկայ ամսուան ընթացքին:

Հաճեցէք այս որոշումը ի մտի ունենալ: Ձեզի պիտի հաղորդենք մեր կատարելիք նշանակումի մասին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 28614
Յուլիս 18, 1972

Հոգեշնորհ
Տ. Արշակ Վրդ. Խաչատուրեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Հայր Արշակ,

Մեր թեմին մէջ պարտաւոր ենք կարգ մը նոր նշանակումներ կատարել հոգեւոր հովիւներու, եւ այդ պատճառաւ յայտնեցինք Ձեզի թէ մօտիկ ապագային պիտի հաղորդենք Ձեզ մեր կարգադրութիւնը։

Այսու կը նշանակենք Ձեզ Հոգեւոր Հովիւ Սաութ Միլվոքիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ համայնքին։

Նախքան Ձեր նոր պաշտօնին ձեռնարկելը, Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ կը մատուցանէք 1972 Սեպտեմբեր 10, Կիրակի օր։

Մենք վստահ ենք որ դուք պիտի շարունակէք նոյն նուիրումով ծառայել իբրեւ ծառայ Տեառն եւ հոգեւոր պաշտօնեայ Հայց. Եկեղեցւոյ, Աստուծմէ Ձեզի շնորհուած տաղանդները ի սպաս դնելով մեր ժողովուրդի հոգեւոր եւ մշակութային կեանքի բարգաւաճման։

Կը յանձնարարենք որ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ Ծխական Խորհուրդը պատշաճ կարգադրութիւն ընէ թէ ծանուցանելու մեր սոյն կարգադրութիւնը Գլիվլէնտի մեր համայնքին, եւ թէ Սեպտեմբեր 10ին համար կազմակերպելու հրապարակային հաւաքոյթ իբրեւ ողջերթի արտայայտութիւն Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցւոյ համայնքին անունով։

Կը մաղթենք որ Տիրոջ օրհնութիւնը անպակաս մնայ Ձեր վրայէն եւ դուք միշտ առողջ մնաք հոգիով եւ մարմինով։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 25786
Ապրիլ 6, 1978

Արժանաշնորհ
Տ. Տիրան Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Ստացած ենք Մարտ 28, 1978 թուակիր ձեր բացատրագիրը: Նման անպատեհու-թեանց առաջքը առնելու համար՝ Եկեղեցւոյ նոր անդամներուն տրուած ստացական-ները պէտք է կրեն անդամակցութեան սկզբնաւորութեան թուականը:

Այսու գիրով կը վաւերացնենք համայնքիդ ծխական ժողովին ընթացքին կատար-ուած ծխական Խորհուրդի երեք անդամներու ընտրութիւնը, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդիդ Նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդիդ նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուր-դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Սեմ Միրաքեան
Տէյվիտ Անտոնեան
Գրիգոր Ղազարեան

Թիւ 25667
Մարտ 9, 1978

Արժանաշնորհ
Տ. Տիրան Քհնյ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ.

Սիրելի Տէր Տիրան,

Մարտ 7ին ստացանք Փետրուար 12, 1978 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը։

Ձեր ղրկած տեղեկագիրները ամբողջական են, սակայն նախ քան մեր վաւերացումը կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել թէ ծխական ժողովի ատենագրութեան մէջ նկատեցինք որ, հակառակ անդամի մը կատարած դիտողութեան, ժողովը որոշած է անտես առնել Թեմական Կանոնադրութեան 7րդ Յօդուածը։ Անդամական ժողովը ինքզինքին իրաւունք չի կրնար տալ Կանոնադրութեան յօդուած մը անտեսելու։ Եթէ բացառիկ պարագայ մը կար, անիկա նախապէս պէտք էր Առաջնորդի ուշադրութեան բերուէր եւ անոր արտօնութիւնը ունենալ՝ որեւէ որոշում առնելէ առաջ։

Հաճեցէք առաջին առիթով մեզի ղրկել անունները այն թեկնածուներուն որոնց ընտրութիւնը վերոյիշեալ յօդուածի տրամադրութեան հակառակ կատարուած կը նկատուի, ինչպէս նաեւ Եկեղեցւոյդ գանձապահի ստորագրութեամբ անոնց տրուած ըստացականին թիւը եւ անդամատուրքի վճարման ճիշդ թուականը, որ հիմ կը ծառայէ 7րդ յօդուածի տրամադրութեան գործադրման։

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Թիւ 24391
Մարտ 14, 1974

Արժանաշնորհ
Տ. Տիրան Քհնյ. Պապազեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի
Հայաստանեայց Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Գլիվլէնտ, Օհայօ.

Սիրելի Տէր Տիրան,

Համայնքիդ երկրորդ ծխական ժողովի արդիւնքը հաղորդող Մարտ 4, 1974 թուակիր Ձեր նամակով տուած էիք նաեւ մեր կողմէ ուզուած կարգ մը հարցերու լուսաբանութիւնները:

Խօսելով քարոզելու համար հրաւիրուելիք անձերու մասին՝ հարցուցած էիք. ``Այժմէն կ'ուզենք գիտնալ թէ ապագային նմանօրինակ պարագաներու հա՞րկ է որ մենք թեմին Առաջնորդին արտօնութիւնը ունենանք, եւ թէ արդեօք իւրաքանչիւր պարագայի նոր արտօնութիւն մը պէտք կա՞յ թէ իսկ նոյն անձը ըլլայ խնդրոյ առարկան...:``

Ի պատասխան կը փափաքինք տեղեկացնել թէ ոեւէ նոր անձի պարագային, որ կը հրաւիրէք քարոզելու Ձեր եկեղեցիին մէջ, անհրաժեշտ է ունենալ Առաջնորդի հաւանութիւնը: Կ'ուզենք աւելցնել որ ներկայիս չենք կրնար արտօնութիւն տալ իգական սեռին քարոզելու մեր եկեղեցւոյ մէջ:

Եկեղեցւոյդ նորընտիր ծխական Խորհուրդի վաւերացման պաշտօնագիրը առանձին պահարանով ղրկուած է Ձեր հասցէին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ